

Սմբատս Բիւրաս  
Կմբագրութիւն «Փիիւնիկ», Վ  
Աղեքսանդրիա



S. Burat  
Rédaction «PUNIG»  
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՅՄԱՆ

Ղ.բ.ժ.  
ՏԱՐԵԿԱՆ... 45  
Վ.ԵՑԱՄՍԵԱՅ 25

Յր.  
ՏԱՐԵԿԱՆ... 15  
Վ.ԵՑԱՄՍԵԱՅ 8

ԲԱԺՆԵԳԻՆԸ  
ԿԱՆԵԽԻԿ Է

ԿՈՎԿԱՍ  
ՏՆ.ԵԿԱՆ Բալ. 6

# Փիիւնիկ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ. ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 1 ՓԵՏՐՈՒՍԻ 1902

Թիի 37

## ԳԵՐԱԳՈՅՆ ԲՈՊԷՆ

Այո՛, դեռ պիտի տեւ այս վիճակը, որ սակաւ պիտի վասթարանայ. դեռ շա՛տ պիտի ապրինք այս կեանքը զրկանքի ու հալածանքի. դեռ պիտի հոսի ուխտ արիւնք մեր հայրերուն ու եղբայրներուն, մե՛ր եղբմական հողին վրայ. դեռ պիտի քալլեն, դեռ պիտի ֆանդեն, դեռ պիտի այրեն, դեռ պիտի բանտարկեն, դեռ պիտի ախտեն, դեռ պիտի կախեն, դեռ պիտի մորթեն ու ջարդեն, դեռ շա՛տ պիտի տեւ այս վիճակը, որ Ֆրանսայի Խորհրդարանին վերջին նիստերէն մէկուն մէջ հռչակուեցաւ *կանոնաւոր վիճակ*:

Դահնապետը հո՛ն է, երլսրգի խորը. կ'արձակէ *խրտեմները*, բացարձակ ու անդառնալի. անի չը կ'եսանար, ո՞նիւրներու ֆաղցովը կը սանջուի. արիւնի ծարա՛ւը կզգայ միշտ, իր պատահաս կայսրութեան օրհասին գէշ երազը կը տեսնէ անի, ու այդ անդոհան-

բէն յանախուած ուղե՛ղն է որ կը մղէ զինք այդ հրէշ ոնիրներուն. շուրջը շարուած կեցած վախկոտ, ստուկ ու շահամոլ արքանեակներուն երամակը, իրենց մարդասպան սիրոջ արիւնկըզակ շքունէն թափած վանկերը կը ժողովեն. արիւնո՛ւս պատգամներ, որոնք ցեղերուն ազնուագունիքն, մե՛ր Յեղիկ բնաջնջումն ու անհետացումը կը վընճեն... :

Եւ սակայն կ'ապ.ի՛ Անի, իր գերութեանը մէջ, իր ցնցոտիներուն մէջ ու աւերակներուն վրայ. կ'ապրի ու կը շնչէ յոյսովը լաւագոյն օրերու: Դեռ չը պիտի կորսուի, կենդանութեան նրշաններ ցոյց կուտայ իր վրայ. իր սառնապանքին ու չարչարանքին մէջ աւելի՛ գեղեցկացած է ու հրապոյր հագած:

Ապրէ՛, ցեղերուն ազնիւր, ապրէ՛ իմ Յեղս, ապրէ՛ ազգերուն շարքին մէջ, որ ֆու յատուկ տեղ պիտի ունենայիր դուն... :

Ապրի՛լ. բայց ի՛նչպէս պատշաճական միանուագ արագ արագ ջարդերուն կարմիր թուսկանին յաջորդած

է հիմայ Սեւ Երջանը կէս-պատսօմա-  
կան, խորհրդաւոր, յամբ ու դանդաղ  
հասնումին, մասնակի բայց մեսասեւ  
չարդերուն սեւ Երջանը:

Հիմայ Երլսրգի Մարդասպանը  
վախած է իր սնուցործութեան մեքո-  
սը. անոր կառավարութիւն կոչուածը՝  
խոհեմութիւնը կունենայ բնաջնջումի  
գործը լրացնելու *կանաց կանաց, յա-  
ճորդաբար ու ապահովապէս:*

Ու այսպէս, սուրով, հուրով, սո-  
վով, սարագութեամբ, կեղեքումներով  
ու նեղումներով կ'ամայանայ Հայոց Եր-  
կիրը, կը կասարուի ազգաջունջ գործը:

\* \* \*

Մեծիկնի ումբակոծումին քէ մա-  
սային գրաւումին միջադէպէն՝ միա-  
մտութիւնն ունեցանք վայրկեան մը ըս-  
պասելու մե՛ր ալ հարցին լուծումին  
կարելիութիւնը: Միջադէպը փակուե-  
ցաւ. իսկ մեր հարցը, Արեւելի քոնիկ  
ախար, մնաց իր *կանոնաւոր* վիճակին  
մէջ: Ֆրանսական խորհրդարանը բիջ մը  
աղմուկ հանեց անոր շուրջը: Հայաստան  
բառը քանի մ'անգամ թուա բարեպա-  
տիկ բերաններէ ու յետոյ, լուծումին սի-  
րեց. կասակախաղը վերջացած էր, վա-  
րագոյրը վար իջաւ: Խաղ մը միայն  
պակաս էր, այն ալ վերջերս խաղա-  
ցին: Ամսոյս 20 ի խորհրդարանական  
նիստին մէջ, Տ. Կ. Ռուսնէի ու Տրնի  
*Քոչէնի* ամիսներ առաջ սպասուած  
հարցապնդումները տեղի ունեցան. եր-  
կուին ալ Հայկական հարցին անյա-  
պաղ լուծումը պահանջեցին, բայց ՚ի  
գո՛ւր. Տ. Տէլգասէի այն յայտարարու-  
թիւնը քէ՛ Հայկական Հարցը միջազ-  
գային հարց մըն է, եւ քէ՛ Ֆրանսան  
ինք իր գլխուն չը կրնար անոր դայիլ,  
235ի դէմ 280 քուէներով ընդունուեցաւ

ու այսպէս, այս անգամ ալ Հայոց  
Հարցը թաղուեցաւ:

\* \* \*

Ի՞նչ կը մնայ ուրեմն ընել մեզի,  
երբ ո՛չ հետեւիլ փորձառու ազգերուն  
օրինակին. բռնել նամբան, զոր գծած  
են ժամանակին անկեղծ ու նեմարիս  
հայրենասէրները:

Աղէտք՝ անուելիօրէն անհո՛ւն է ու  
բոպէն՝ գերագոյն. ազգ մը բովանդակ՝  
նգնածամի քրտնէր կը քրտնի, գոյի ու չը  
գոյի վայրկեանն ենք: Է՛ն ուրեմն, ի՞նչ  
կայ մեզի ընելու դեռ. գործելու ժա՛մն  
է. մոռնա՛նք ուրեմն հին յիսերը, իսեղ-  
դե՛նք կիրքերը, թո՛ղ դադրին ընկեա-  
տեաց յարձակումները, մարե՛նք անջա-  
տիչ զգացումները, մէջտեղէն վերցնե՛նք  
կուսակցական խտրը, արհամարհե՛նք  
անհասի սեղմ ու նեղ նկատումները, կո-  
խոտե՛նք գնումն Եւրոպայի, վախո՛ւնք ապրե-  
լու մեր եղանակը, թօթուե՛նք հոգը  
կեղծ գոյութեան մը, ու մօտենա՛նք, ամ.  
փոփոխե՛նք, փարի՛նք, գրկախաւնու-  
ի՛նք, միանա՛նք, մէկ բառով:

Հայրենիքին ազատագրութեան Ս.  
Դասը՝ թո՛ղ մեզ իրարու կապէ, թո՛ղ  
մեզ ոգեւորէ ու զինէ. Ազատութեան  
խորանին առջեւ ուխտե՛նք, մէ՛կ սիրս  
ու մէ՛կ կամք, մէ՛կ գաղափար կազ-  
մել ու, անմիջապէս, ձեռնարկել գոր-  
ծի...:

«Հայե՛ր, ձեզի հաւար աղաղակելու  
րոպէն չե, այլ գործելու:

Ազատ ըլլալ ուզող ժողովուրդ մը թող  
կազմակերպուի, դաւադրե, շարժի, պայ-  
քարի. ստիպուե՛նք ախորժող մա՛րդն է որ  
կ'աղերսե, կուշայ, կ'աղաչե:

Երբ դուք մեծ պատերազմի մը, մեծ  
յեղափոխութեան մը մէջ զոհե՛իք ձեր 300  
000 խոյխոյնուած եղբայրները, դուք ազատ-  
ուած կ'ըլլայիք:

Թիւրքը կը հաշածե Հայը, թո՛ղ Հայն  
այ Թիւրքը հաշածե:

Թիւրք չե որ հաշուի կ'առնուի, այլ  
հաշուրիւնն ու յանդգնութիւնը:

Կա՛մ մեռնիչ հերոսի պէս գեկը ա-  
փին կռուելով, կա՛մ մեռնիչ անարի եւ վա-  
սասի՛ր՝ հանսկերպ ու շայխան:

Առաջին պարագային դուք ազատ ը-  
շարու ըստեսնե՛ն զուրկ չե՛ք. երկրորդ պարա-  
գային՝ ազատութեան հո՛սն անգամ չե՛ք առ-  
նե՛ր: Ըն՛րեցե՛ք՝:

Ահա՛ Բանի մը հաստատմանն այն  
հրեղէն հրաշակներս նամակին, զոր Ա.  
միլիար Զիպրիանի, միտ մեծ ու միտ  
վե՛ն Խալապին, ուղղած է իբր պա-  
սասիան Երուսալի Հայ Ռասանդական  
Միւրքեան դիմումին:

Ամբողջ պասասիանը պէ՛տ է սա-  
կայն ծայրէ ծայր կարգալ, բերանացի  
սերսել. հասկնալու համար թէ ի՛նչ  
հսկայ խորհուրդներ կը փոթորկին այդ  
պաշտելի հերոսին գանկին սակ:

Սակայն, ի՛նչ հա՛րկ կայ դիմել  
օտարին խորհուրդին, մեր ներկայ կա-  
ցութեան մէջ: Մեր մարտիրոսութիւնը  
քի՛չ խրատներ կը ներշնչէ մեզի, ու ար-  
դէն բաւարար դաս մը չէ՞ այն՝ մեր  
ներկայ ու ապագայ գործունէութեան  
համար:

Մի՛ս միմակ ենք մեր դահնին հե-  
րուն դաւենակցած է բոլոր Երուսալան:  
Սուրբանը մեր ազգին մահը վնաս է,  
իսկ Երուսալան այդ վնասը վատեա-  
ցուց. ամէ՛ն յոյս կորած է ուրեմն. ա-  
մեն բան վերջացա՛ւ. հաւաստի դարե-  
րուն սերունդներն ալ չ՛կան, գերեզման-  
ներ ու վանկեր միայն կտակեցին մե-  
զի. ԳԵՐՍ.ԳՈՅՆ ԲՈՊԷՆ է:

Բայց, այս արհաւիրքին ու այս  
նզնաժամին մէջ դեռ բան մը կը մնայ,  
վերջին բան մը, որ ամեն մարդկային  
հաշիւներուն վերջակէտը կուգայ դնել.  
բան մը, որ լուսածին բնագոյնական  
զէնքն է, ու զէնքերուն հզօրագո՛յնը.  
ՅՈՒՍՍ.ԷՍՏՈՒԹԻՆԸ:

Յուսահասութեան կռիւը պիտի  
մղենք այսուհետեւ:


Կլասոյի սիեգերական Ժ. Խաղա-  
ղութեան Համաժողովին ներկայուած  
սեղեկագրի մը մէջ մեր եղբայրակիցնե-

րէն Տիար Հ. Առաքելեան, թուելէ յե-  
տոյ Հայաստանի մէջ գործադրուած ու  
անպատիժ թողուած պաշտօնական ոմի-  
ները, խաբանելէ յետոյ Երուսալան  
անհարթութիւնը, հետեւեալ տղերով  
կը կ'արտայայտէ իր մտածումը. «Այս  
խոզոտները դեռ չեն կրցեր Երուսա-  
լան քրիստոնէայ սէրութեանց ազգու-  
գործողութիւն մ'ընել տալ. Երուսա-  
լան քրիստոնէայ իիդըն կը լուր ու  
միջազգային արդարութեան հոգը խիստ  
քիչ վառ է Երուսալաններուն եով. ի՛նչ  
ընել կը մնայ ուրեմն Թուրքիոյ Հայե-  
րուս. իրենց կը մնայ կա՛մ մեռնելու  
սոյիկեան համակերպութիւնը, եւ կա՛մ  
հետեւիլ խորհուրդին Երեսասարդ Հա-  
յու մը, որ մեռնելու աստն աղաղակեց.  
«Հայե՛ր, չկա՛յ բարոյական, չը կա՛յ  
արդարութիւն ժողովուրդներուն միջեւ:  
Մե՛նք մեզի սակե՛ք, քի՛րս ուժը ցոյց  
սաշոյ՛, մեր հողին վրայ անկախ ապ-  
րեշու իրաւունքը, եւ կա՛մ ջանա՛նք հոն  
մեռնիչ պաշտարար»:

Այդ յաւէտ հնչող ու հոգիները ցըն-  
ցող աղաղակը՝ վերջին հառաչանքն  
եղաւ անգուգական Հայրենասէր Եր-  
կաթին, որ, կը տեսնուի, շատ կանուխ,  
սարիներ առաջ համոզուած էր թէ՛ ու-  
րիւ միջոց չը կար փրկութեան:

Արդ, երբ տխուր զուգադիպու-  
թեամբ մը, այս տղերը կը վերադա-  
ռուին Փիւնիկի այն էջերուն մէջ ուր  
միեւնոյն աստն կ'երեւի այն յաւէտ ող-  
բացեալ Ախոյեանին վերջին Յայտա-  
րարութիւնը. երբ միեւնոյն տխուր զու-  
գադիպութեամբ Քրանսական խորհր-  
դարանին մէջ, հայկա՛յան հարցը կը  
փորձուի խեղդել նորէն դիւանագի-  
տութեան մուր ու խաւար կամարներուն  
ներքեւը. երբ ուրիւ անելի արտաւարժ  
զուգադիպութեամբ մը, կը հասնինք  
վաղամեռիկ Երկաթին ծննդեան Տարե-  
դարձին որ կը հանդիպի ճիշդ ամսոյս  
ին. արգետոք կա՞յ անելի նուիրական

բան մը քան ուխտել այսուհետեւ բարեբար ու վրեպարար Մոռացումը հին ու մին հաշիւներուն, կնկել ազգովին ընդվզումին Սուրբ Ուխտը, ու կռուիլ մեծ կռիւր, վնասական կռիւր, *այրեջու հաւար անկախ, կա՛մ մեռնեցու հաւար պատուար*:



## Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

### ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԻ

(Կարապետ Պիլեգրիմի)



Է

Յայտարարութիւնը.

(Շար. 12. քիւէն)

Ահա Երկաթին «անխպ» Յայտարարութիւնը, Կ. Պոլսոյ Քրանասական դեպքան Տ. Բ. Գամպոնի յանձնուած, Մայրաքաղաքին ջարդերէն ետք:

«Յոյցէ մ'եսք, որուն նպատակն էր յիշեցնել Տէրութեանց ու անոնց գործադրել սալ Յուսաբին (Մայիսիւնը) պարունակած բարեկորուցումները, հազարաւոր Հայեր, 48 ժամ, խողխողուցան ու կողոպտուցան: Այս վրիժառութիւններով չը շատացած, Պալասը, բանտարկուած ու ամուրի ձեռքին սակ. մինչեւ ներկայ ժամը, կը յարատեւ բնաջնջումի իր *սխտեմ*ին մէջ: Մայրաքաղաքն ու արուարձանները, մէն մի տուն կը խուզարկուի, մէն մի փողոց լրտեսներ կեցած կը հսկեն: Ընտանիքի հայր չ'ըլլալու միակ մեղադրութեամբ, ամեն տարիքի Հայերը կը ձերբակալեն, բանտ կը տանին, կը կողոպտեն ու դէպ ՚ի անձանօթ տեղեր նա կը դնեն:

Անգամ մ'ալ Տէրութեանց ներկայացուցիչները ձեռնառու կ'ըլլան Պա-

լասին: Հայերը մահէ ազատելու պատուակին սակ, անոնց Կ. Պոլսէն արտաքսումին կը սատարեն:

Բաց է ի բաց կ'ըսեն մեզի, կ'իմացընեն մեզի թէ՛ իրենց կառավարութիւնները վնասած են մեր պահանջումները զոհել Եւրոպական խաղաղութեան հարցին:

Բայց ի՞նչ կուզեն Հայեր: Կ'ուզեն որ իրագործուին բարեկորուցումներ, որոնք Տէրութիւնները բանաձեւելով ու Սուլթանին ալ ստորագրել տալով՝ նուիրական պարտաւորութիւնն ստանձնած են զանոնք գործադրելու: Միաբան ու ազգուօրէն գործելով, Տէրութիւնները լիովին կը հնազանդեցնեն Պալասը: Անջատուած՝ շահի վէճերով, որոնց՝ աշխարհիս մէջ ոչի՛նչ իրենց՝ իրաւունք կուտայ ստորագրուելու մեր գոյութեան հարցը, իբր անհաս ու իբր ազգ. խաղաղիւնները կ'ըլլան հրոսախումբի մը, առաջակներու ու մարդասպաններու որ, Երկրագնի մէջ, իրեն նպատակ ըրած է բնաջինջ ընել հայ ազգաբնակչութիւնը:

Երկրագործ, բանուոր, արհեստաւոր, վաճառական, բժիշկ, փաստաբան, մրտաւորութիւն մարդեր ու գործի. ազգ՝ մէկ բառով, ձայն կը բարձրացնենք, (վախցէ՛ք որ մեր ձայնը շուտով արձագանգ մը չ'ըզնէ՛ք ձեր բուն երկրին աշխատուող դասակարգներուն մէջ) եւ, անհասարկ կռիւն մէջ զոր կը մղենք մեր յեղեփիչներուն դէմ, կը հրաւիրենք ձեզ քաղաքակրթութեան գործիչներուն կողմը բռնել ընդդէմ անոնց որոնք դուք տեսնաք *վիշաշեթ*ներուն մէջ եւ մինչեւ իսկ Մայրաքաղաքը. զօրքեր, ֆուրքեր, պալասի լրտեսներ ու դատարկապորտներ համախմբուած իրենց Աստուծուն ֆրիստեայարիւն ընծայելու համար ու մէկ գիշերուան մէջ փանդելու դարաւոր վատարկներու զնովը դիզուած դրամազուխներու: գործը:

Հայկական դասին յաջողութեանը

հետ կապուած են ո՛չ միայն պատիւը, այլ եւ ապահովութիւնն ու բարգաւաճումն Եւրոպային: Մեզմո՛վ պիտի բացուին իր առեւտուրին, իր ձեռարուեսին, իր գաղափարներուն, այն նախքաները, այն դասերն ու այն հովիտները, որոնք բարբարոսներն ամայացուցին:

Հոս աղաչանք մը չէ որ կրնենք: Չե՛ր աչքին տակ դնելով Կ. Պոլսոյ մէջ Հայերուն հալածանքը, վերջին անգամ մը կուգանք ձեզի յիշեցնել քիստոնէից պատշապանի ձեր պարտականութիւնները:

Չ'պիտի թողունք երթանք քաղէք մը, ուր քսան անգամ մեր նախնիքը գրաւեցին բիւզանդական գահը. քաղաք մը, որ մեզի՛ կը պատկանի, Յոյներուն հետ միասին, որովհետեւ մեր գործունէութեան կը պարտի իր հարստութիւնը:

Ներկայացուցի՛չ Ֆրանսական Հանրապետութեան, Դոմ պէտք է որ ամենակարգ միջոցի մէջ դադրեցնել տաք Հայերուն խմբովին բանտարկութիւնն ու անտրը:

Նոր գործունէութիւն մը պատրաստ է, որով պիտի յայտնուի մեր Ազգին կենսատրուութիւնը: Եթէ ներկայ զեկոյցի վրայ, ձեր կողմէն ո՛ր եւ է ազգու միջոց մը ձեռք չ'առնուի, պիտի տեսնէք մեզ անգամ մ'ալ մահը միջամուխ քնել կռուին մէջ:

Համոզուած ըլլալով թէ՛ մեր դասը ճիշդ է, մեր պահանջումները չափաւոր են եւ թէ՛ Չարը, փրկութեան ուրիշ միջոց չ'ըլլալով, պիտի մեզի տայ դրական արդիւնքներ. մենք մեզ պիտի քաշենք ձգենք հասարակաց աղէտի մը մէջ, թէ՛ մեզ ու թէ՛ զմեզ քշապատողները, քաշելով բերելով զձեզ դարուն դատարանը, պատասխանելու համար այն սահալքներուն որ պիտի յաջորդեն այս երբեք ու ո՛չ վերջին բուն փորձին, զոր ձեր ապիկարութիւնն եւ ուղղամտութեան պակասը կը հարկադրեն

մեզ՝ չը խնայելու Արեւելի Մայրաքաղաքին:

ՀԱՅ ԱԶԳԸ

Կ. Պոլիս 7 Սեպտեմբեր 1896.

Միեւնոյն ժամանակ Տիգրան Երկաթ փութացած էր համխմաս զեկոյցներ դրկել նաեւ Կ. Պոլսոյ միւս մեծ տէրութեանց դեսպաններուն:

(Շարունակելի)

Ս. ԲԻԻՐԱՏ

Ք Ր Ո Ն Ի Կ

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

— ԳԱՀԻՐԷԻ ԳՍԼԱՏ. ՎԱՐԺԱՐԱՆՆԻՆ վրայ այս քաղաքուան մէջ ստացանք խիստ անախորժ տեղեկութիւններ որոնց առ այժմ համատեսութիւնը կը հրատարակենք վերապահումով, սպասելով մանրամասնութեանց: «Յունի. 24ին որքաք օրուան Բաղ. Ժողովին որոշմանը երկու պաշտօնական նախակներ կ'ուղղուին. մին՝ հոգաբարձութեան՝ հաղորդելով Օր. Սօժիի Մանխաշտանի նախկին պաշտօնին մէջ վերահաստատելով. միւսը Օր. Սօժի, հրատարակելով որ երկու շաբաթի սկսեալ շարունակե իր ընդհատած դասախօսութիւնները: Տղայ Հոգաբարձուները կիրակի իրիկունք քոչոր ուսուցիչներուն հետ արտասովոր նիստ մը կունենան, որուն արդիւնքը կը տեսնուի հետեւեալ արարօքը: Պ. Տնօրէնը դրան առաջ կեցած՝ քոչոր աղջիկները տուներէն կը դարձնեն պատարելով որ միևնջեռ ցնոր տնօրէնութիւն վարժարան չը յաճախեն: Պաշտօնէն ալ միւս երկու ուսուցիչները կ'սկսին ծաղրել Օր. Սօժի՛ն «ԱԻԱՂՓԱՌԱՅՍ» աղաղակելով:

Աղջիկները տուներէն կը վերա-

դառնան. հայրերը յուզուած կը դիմեն Պ. Տնօրէնին ու Արժ. Առաջն. Փոխանորդին. Բաղ. Ժողովոյ անդամները գրաւորապէս Օր. Սօժիէն կը պահանջեն այս եղելութեան մանրամասնութիւնները:

Այս սգեղ ցոյցով Հոգաբարձուները հասկըցընել ուզեր են երես. եւ Բաղ. Ժողովներուն թե՛ աշակերտուիները դժգոհ Օր. Սօժիէն՝ վարժարան չեն ուզեր յանձնիլ:»

Այս սգեղ միջադէպին մէջ կէս մը կայ որ մեզ զարմանի ու միանգամայն ցաւ կը պատճառէ. այն է, միջառնութիւնը Տիար Տնօրէնին, որուն անձնական արժանիքն ու խոհեմութիւնը մեզի անձանօք չ'են: Մտադրեմք որ շուտով հերժուի գէր այս պարագան:

Հիմա սեղը չէ՞ արդեօք դասապարտել այն ժողովները, որ ժամանակէ մ'ի վեր կը խաղացուի Գալստեան վարժարանին մէջ, զոյս հոգաբարձուներու կողմէն, ու, ցաւալի՛ պարագայ, մասնակցութեամբ ուսուցիչներու ալ, որոնց մէջ ամենէն աւելի արգահատելին կը գտնենք *ասեալը ռիսքայէտէն* Օհան Պատուելի Խնձամեանը, Կ. Պոլիս, Պապը Ալիի փողոցը, փաստաբաններուն հղանցիքն ֆուրսող, Գահիրէ ալ՝ Երիսասարդ Թուրքերուն վիժածները հայերէնի թարգմանելով իր խղճալի գոյութիւնը փառեօղ երիցս երանելի մարդուկը, որ Գահիրէի Գաղթականաց Յանձնաժողովին գրագրութիւնն ալ վարեց ասէն մը: Այս արարածը, Գալստեան վարժարանին պատէն ներս սողոսկած օրէն ասդին՝ խաբելու ելեր է խեղճ ժողովուրդը, *հազար ու մեկ գիշերներուն* սեսակէն վարդագոյն *հեփիւսքներ* ստեղծելով իր գոյութիւնը պահող այդ դժբաղդ հաստատութեան շուրջը:

ՓԻՒՆԻԿ — ուր նախ երեցաւ Տապար ծածկանուան ճակ պահուրճած այդ թզուկին յօլուածը,—նախ հանրօգուս թերթ մըն էր, իմբագիրն ալ *ճշմարտու-*

*թեան ախոյեան մը*, ուղղա լիս ու անվեհեր գրող մը. յետոյ, երբ նոյն «Փիւնիկ»ի մէջ երեցաւ հե՛հումը *կայծփարի* (որ Օհան Խնձամեանի պէս պատուելի մը զօս գանկը ձեռքին մէջ առնող լատիներէ թարեկա՛ւ մըն է), Փիւնիկը փոխուեցաւ հրաճով մը հահիքի ուր աղետոյթիւններ կ'ընդունուին — անուուս Տապարին յօղուածին ակնարկել ուզե՛ր է:—

Զգե՛նք, այդ ողորմելին իր թոյլ խեղճութեանը մէջ թող սապիկի ու անգամ մ'ալ հրախրեմք Գահիրէի Պատկ. Ազգ. Վարչութեան ուշադրութիւնը Գալստեան վարժարանին գայրակողութեանց լրայ:

— ԿԻՒԿԻՌՅ ՆՈՐՈՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ, որուն հրաժարիլը ծանուցած էինք, վերջապէս ես առած է հրաժարականը, ինչպէս որ կը տեղեկանանք այս շաբթուան Պոլսական թերթերէն:

### ՔԱՂԱՔԱԿԱՆ



— ԱՆԴՐԱՆԻԿ ՈՒ ՍՈՒԿԹԱՆԸ . — Տեղական ժար *ս'Աշեֆսաների* օրաթերթին ՕՐՈՒՍՆ ՀԱՐՅԵՐ՝ վերնագրով շահեկան յօղուածէ մը թարգմանօրէն կ'արտագրենք հետեւեալ հասուածը.

«Հակառակ Հայոց *սիւսե՛հակաւն* ու ֆրոնիկ վիճակ մը դարձած ջնջումներուն. հակառակ Երիսասարդ Թուրքերու բարձումներուն, հանդարտութիւնը հեռի է տրեղէ անոր (Համիտի) ընդարձակ երկիրներուն մէջ: Իր նուազ գուճակած մէկ պահուն, անհա՛ մէջ տեղ կ'ելնէ խիզախ մէկը, Անդրանիկ մը. Սասնոյ որդի, ազատ Հայաստանին նախնի հերոսներու տապար մը, որ կը յիշեցնէ թերեւս քիչ մը չափազանցուած — ո՛ր ժողովուրդը չը զարդարե իր կիսաստուածներն ամեն լաւութիւններով —

նախնիրները Մուշեղներուն, Վարդաններուն, Գալլ Վահաններուն ու վերջին ասեցները, Դաիթքեկներուն ու Մխիթարներուն: Ապրելու իրաւունքին այս ախոյեանը՝ զինք հալածող կասադի բուրք գորապետը կը դնէ միեւնոյն դիրքին մէջ, ինչպէս որ Տրուէ՛ր՝ անգլիացի գորապետները: Առաջին անգամ մը, Սասնոյ լեռներուն ստորոք վանքի վր մէջ պատարուած, կը նողոպրի անկէ իր զինակիցներով: Քանի մ'օր վերջ, քեւածիները քանահեղով՝ հոն կը վերադառնայ ու քիչ յետոյ նորէն դուրս կ'ելնէ: Մէկ խօսումով, կը գտնուիմք դիւցազներգութեան մը հանդէպ: Պատահումները սակայն ներելի չ'են: Պիտի ընկնի՛ր, այդ խիզախ մարդը. պիտի ընկնի՛ր, անոր արի զինակիցները: Պիտի դադրին բարախելէ, այդ անվախ արտերը: Ամենք պիտի մեռնին անմահ դասի մը համար, ու իրենց մահով պիտի ապրին մաքրեւուն յիշողութեանը մէջ միեւնոյն սիսդոսով ինչպէս որ կ'ապրին իրենց նախորդներն եղող Հելլեններուն, Պուլկարներուն, Կրեսացիներուն հերոսները:

Բայց իրաւ, անհրաժեշտ է որ այսօր կեանքեր հնձուին բնութեան ընթացքը կեցնելու իմաստ նպասակով: Եւ սակայն ա՛յս է որ կը պատահին հանդիսարդները կը ծափահարեն, ինչպէս որ, Ներոնի օրով, սիրապետ ժողովուրդը, աշխարհի առաջին ժողովուրդը, կը ծափահարէր սարսուռները նահասակներուն, որոնք կը դողդողային վայրենի գազաններուն նիւաններուն տակ: Ու մենք, այն դարը, մենք կը կոչենք բարբարի՛կ դար...:

Ա՛յսօր փոխուած ենք ուրեմն:

— ՏՐԻՊՈՒԻՍ ԻՏՍՆԻՍՅ. Ոչ միայն չը հերժուեցաւ, այլ ընդհակառակն անելի հաստատութիւն կը գտնէ այն գրոյցը, որուն համեմատ Իսալիան մօտ ժամանակի մէջ պիտի տեսնուի Տրիպոլսոյ: Այս արեւաւանքին համար կը կարծուի

թէ՛ նախապատասխանութիւններն արդէն եղած են:

Միւս կողմէն, Անգլիան երկու մասնաւոր կ'ապաստեցնէ Տրիպոլսոյ առջեւ ու Իսալիոյ դժգոհութիւն կ'առթէ:

ԱՅՂԱՆԻՍՏԱՆԻ ՈՒ ԱՆԳԼԻԱՆ, Անգլիական Հնդկաց լրագիրները խիստ յուզուած են վերջեւ Ա.Քղանիստանի կացութեան համար:

Էմիրը կամաց կամաց անգլիական պատերազմութեան բեռը վրայէն նետել կուզէ, օգտուելով թրանսլապի պատերազմէն: Հապիտյ Ուլլան Խանն անելի Ռուսիոյ մօտեմալու փափագ ցոյց կուտայ:

— ՆՐԻՏՍՍՍՐԴ ԹՈՒՐԿԵՐԸ ԲՍՐԻՉԻ ՄԷՋ. Յունվար 27ին հեռագրէ մը կ'իմացուի թէ Քրանսական կառավարութիւնը արգիլած է Նրիտանացի թուրքերու գումարում մը, որ հրախրուած էր Տամաս Մանմուտ բաւայի որդիներուն կողմէն:

Ապրի՛ ազատամիտ Ֆրանսան...: Դեռ երկու ամիս առաջ Նրիտանացի լրեստները կ'արտաստուէին Քրանսայէն. իսկ հիմայ Նրիտանացի թուրքերը կը բռնադատուին ուրիշ երկիրներ ապաստանիլ իրենց անարգել գործունէութեան համար:

## Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

ԳՈՐԾԱԳՈՒԼ: — Այսօր, ժամը 9ին, հարիւրաւոր սափրիչները, խուճը խուճը՝ անցան Մեծ Հրապարակէն: Այսպէս գործադուրը հաշակուած է:

Կ'իմանանք նաև թէ՛ կառավարներն ալ գործադուր պիտի ընեն:

«ԱՐԱՔՍ»

Հայկական Տպարանը թէ՛  
Հայերէն, թէ՛ գաղղիերէն և  
թէ՛ ուրիշ լեզուներով ամեն  
տեսակ տպագրական գործեր  
կը կատարէ մեծ խնամով եւ  
ինչ որ նուազ կարևոր չէ

իսկ չափաւոր գիներով:

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Միաց. Նահանգներուն Ուս-  
տըր քաղքէն Հայրենակից մը  
մտադիր ըլլալով Հայերէնի  
թարգմանել տալ արաբերէն  
գիրք մը, կը փնտռէ այդ եր-  
կու լեզուներուն հաւասարա-  
պէս հմուտ եղող անձ մը, ու  
րուն թարգմանչութիւնը բնա-

կանաբար պիտի վարձատրուի:  
Դիմել Փիիւնիկի խմբագրա-  
տունը. նամակ զրկել թերթիս  
Հասցէին՝

S. Burat, Rédaction Punig,  
Alexandrie (Egypte)

Գ. ԵՒ Ա. ԹՕԳԱԹԵԱՆ ԵՂԲԱՐԲ

ԿԱՇԵՂԻՆԱՑ ՅԱՐԴԱՐԻԶԲ

Tapissiers et décorateurs

Քաղաքիս երեսիլի հայ տուներուն  
ծանօթ յանախորդ, կը պատրաստեն  
գոհացուցիչ պայմաններով ամեն տե-  
սակ կահեղէններ, վարագոյր, եւն.  
Յանձնարարութիւնք խնամով կը  
կատարուին:

Դիմել, Ադդարիւն, Թիւեյ-էյ-Զահապի,  
Attarine Ruelle-el - Zababy

SALAMANDER

ՍԱԼԱՄԱՆՏԸՐ

Ապահովագրական Ընկերութիւն  
ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Իրամագլուխ 3,125,000 ֆրանգ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս  
նաև Ծովային, Գետային և Յամաքային փոխադրութեանց արկածներու դէմ.

Դիւրամատչելի գներ և պայմաններ

Դիմել առ Ընդհանուր Գործակալ եւ Լիազօր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՖԱԵԱՆ

Աղեփասնորիս, պզտիկ Մէնչիե Ապուսարսա փողոց թիւ 10

L'ALLIANCE

Լ'ԱԼԻԱՆՍ

Ծովային Ապահովագրական Ըն-  
կերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Իրամագլուխ 5,000,000 ֆրանգ